



Արարատյան բակալավրիատ



ԱԵԲ

կրթական հիմնադրամ

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԿ «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԿԱԿՐԻԱՏ» ԾՐԱԳՐԻ ԴՊՐՈՑ

ԱԲ-Ի ԾՐԱԳՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Արարատյան բակալավրիատը (ԱԲ) միջազգային չափանիշներին համապատասխան հայալեզու կրթական ծրագիր է՝ նախատեսված ավագ դպրոցի 10-ից 12-րդ դասարանների աշակերտների համար:

ԻՆՉ ԿՏԱ ԱԲ-Ը ՁԵՐ ԴՊՐՈՑԻՆ

Միանալով ԱԲ-ի ծրագրին՝ ձեր դպրոցը՝

- կառաջարկի միջազգային ճանաչում ունեցող հայալեզու կրթական ծրագիր, որն աջակցում է աշակերտներին՝ լիարժեքորեն բացահայտելու սեփական ներուժը և մրցունակ լինելու համաշխարհային կրթական դաշտում.
- կունենա ԱԲ-ի վերապատրաստված

և հավաստագրված ուսուցչական անձնակազմ, որը կրողն է ժամանակակից և բարձր մասնագիտական կարողությունների և որը կվարձատրվի նոր չափանիշներով.

- կդառնա ստեղծարար և ազատ դպրոցների ցանցի անդամ.
- համարված կլինի լաբորատոր և կրթական արդի ռեսուրսներով.
- հանդես կգա որպես համայնքային կենտրոն:

Այս ուղեցույցը նկարագրում է՝

- ԱԲ-ի ծրագրին անդամակցելու փուլերն ու քայլերը,
- յուրաքանչյուր փուլի չափանիշներն ու ակնկալվող արդյունքները,
- յուրաքանչյուր փուլում դպրոցի պարտավորությունները,
- դպրոցներին ներկայացվող աջակցությունը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԾՐԱԳՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ՔԱՅԼԵՐԸ

<p>Փուլ 1. Ծանոթացում ԱԲ-ի ծրագրին</p>	<p>Քայլ 1: Ծանոթացեք ԱԲ-ի ծրագրի նպատակներին և պահանջներին մեր կայքում հասանելի նյութերով:</p>
<p>Փուլ 2. Դիմում</p>	<p>Քայլ 2: Մասնակցեք ձեր մարզում կազմակերպվող հանրային լսումներին: Հանրային լսումների ժամանակացույցը կարող եք գտնել մեր կայքում:</p>
<p>Փուլ 3. Թեկնածություն</p>	<p>Քայլ 3: Կայքից լրացրեք և ներկայացրեք դիմում-հայտը:</p> <p>Քայլ 4: Սպասեք մեզ ձեր դպրոցում տնօրենի և թիմի հետ հարցազրույցի, ինչպես նաև դպրոցի մշակույթին ու մոտեցումներին ծանոթանալու համար:</p>
<p>Փուլ 4. Հավաստագրում</p>	<p>Քայլ 5: Համաձայն ԱԲ-ի թիմի ներկայացրած առաջարկությունների և ծրագրի պահանջների՝ իրականացրեք բարեփոխումներ թեկնածության փուլի 3 տարվա ընթացքում:</p> <p>Քայլ 6: Պահպանեք նախորդ փուլերում իրականացրած փոփոխությունները և իրականացրեք շարունակական բարելավում:</p>

ՓՈՒԼ 1. ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԱԲ-Ի ԾՐԱԳՐԻՆ

Քայլ 1: Ծանոթացեք ԱԲ-ի ծրագրին՝ այցելելով [Արարատյան բակալավրիատի կայք](#), որտեղից կարող եք տեղեկանալ ԱԲ-ի ծրագրի առաքելությանն ու նպատակներին, անդամակցության փուլերին և վերջնաժամկետներին:

Քայլ 2: Մասնակցեք ձեր մարզում կազմակերպվող [հանրային լսումներին](#), որտեղ ԱԲ-ի թիմը կներկայացնի ծրագրի առաքելությունը, նպատակները, անդամակցության քայլերն ու չափանիշները և կպատասխանի ձեր հարցերին:

Նշում: Նախընտրելի է, որ հանրային լսումներին մասնակցեն դպրոցի համայնքի մինչև 4 ներկայացուցիչ կողմից կառավարման մարմնից, տնօրենությունից, վարչական և ուսուցչական

անձնակազմից, ծնողական և աշակերտական խորհուրդներից:

Եթե վերոնշյալ կետերն իրականացնելուց հետո դեռ մնացել են հարցեր, ապա կարող եք զանգահարել +374 98 52 37 07 հեռախոսահամարով կամ գրել ab@ayb.am էլ. հասցեին:

ԻՆՉ ԱՆԵԼ ՄԻՆՋԱ ԽԱՋՈՐԴ ՓՈՒԼ ԱՆՑՆԵԼՂ

Ծրագրին դիմելու որոշում կայացնելուց առաջ խորհուրդ ենք տալիս իրականացնել իրագործելիության ուսումնասիրություն (feasibility study)՝ հասկանալու համար, թե ձեր դպրոցն ինչ հնարավորություններ ունի ծրագիրը կյանքի կոչելու համար:

Իրագործելիության ուսումնասիրությունն իրականացնելու համար հարկավոր կլինի՝

- ձևավորել թիմ՝ կազմված դպրոցի համայնքի (կողմից մարմին, ուսուցչական,

աշակերտական, ծնողական համայնքներ) տարբեր ներկայացուցիչներից.

- ուսումնասիրել ԱԲ-ի ծրագրի առաքելությունը, արժեքներն ու նպատակները և համեմատել սեփական դպրոցի առաքելության, արժեքների ու նպատակների հետ.
- ուսումնասիրել ծրագրի պահանջներն ու կանոնակարգերը և գնահատել դպրոցի ներկայիս իրավիճակը, ռեսուրսների առկայությունը, անձնակազմի պատրաստվածությունը՝ դրանք համադրելով ծրագրի պահանջների հետ.
- սահմանել մոտավոր ժամանակահատված, որի ընթացքում հնարավոր կլինի բավարարել ծրագրի պահանջները, և այն համեմատել ծրագրի ժամանակացույցի հետ.
- գնահատել ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել ծրագրի իրականացմանը.
- գնահատել այն դրական ազդեցությունը, որը ծրագիրը կունենա դպրոցի և վերջինիս համայնքի վրա.
- ելնելով վերոնշյալ տվյալներից՝ գնահատել ծրագրի իրագործելիության աստիճանը և որոշում կայացնել՝ ներկայացնել անդամակցության դիմում, թե ոչ:

Նշում: Իրագործելիության ուսումնասիրության իրականացումը ծրագրային պարտադիր պահանջ է, այլ օգտակար քայլ դպրոցի համար՝ հասկանալու, թե ինչքանով է դպրոցը ծրագրի իրագործմանը պատրաստ:

ՓՈՒԼ 2. ԴԻՄՈՒՄԻ ՓՈՒԼ

Դպրոցների ընտրության նախապայմանները

Դպրոցների ընտրության գործընթացին կարող են մասնակցել և դիմում-հայտը լրացնել միայն այն դպրոցները, որոնք՝

- տեղակայված են ՀՀ մարզերում,
- ունեն ավագ դպրոցի բաղադրիչ (առանձին գործող ավագ դպրոցներ, միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ) և հատուկ կամ մասնագիտացված դպրոց չեն:

Նշում: Մեր նպատակն է ծրագիրը ներդնել

հնարավորինս շատ մարզերում: Պետության կողմից դպրոցների քանակի սահմանափակման դեպքում, եթե նույն մարզից դիմի մեկից ավելի դպրոց, նախընտրությունը կտրվի մեր չափանիշներին առավելագույնը բավարարած դպրոցին: Միևնույն մարզի միանման դպրոցների դիմելու դեպքում նախընտրությունը կտրվի այն դպրոցին, որն ունի՝

- նշանակալի աշակերտական և ուսուցչական ձեռքբերումներ վերջին երեք տարիների ընթացքում,
- ակտիվ դերակատարություն համայնքային կյանքում,
- ավելի մեծ թվով աշակերտներ:

ՔԱՅԼ 1. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԼՐԱՑՈՒՄ

Եթե համապատասխանում եք դպրոցների ընտրության նախապայմաններին, ապա կարող եք լրացնել **կայքում** հասանելի դիմում-հայտը, որի հիմնական բաժինները հետևյալն են.

- Ա. Տեղեկատվական բաժին
- Բ. Առաքելություն և նպատակներ
- Գ. Ուսումնառություն և դասավանդում
- Դ. Ռեսուրսների կառավարում
- Ե. Համայնքային գործունեություն
- Զ. Մթնոլորտ (կազմակերպչական գործընթացներ և մշակույթ)
- Է. Ֆիզիկական միջավայր և անվտանգություն

Դիմում-հայտը լրացնելուց առաջ դպրոցի տնօրենությունը նաև պետք է նշանակի **ծրագրի համակարգող**, ով հետագայում կապ է պահպանելու ԱԲ-ի թիմի հետ: Ծրագրի համակարգողի դերում կարող է հանդես գալ դպրոցի տնօրենը կամ դպրոցի անձնակազմից մեկ այլ անձ:

Դպրոցի տնօրենությունը պատասխանատվություն է կրում դիմում-հայտում ներկայացված ցանկացած տեղեկության ճշմարտացիության ու ճշգրտության համար: Եթե որևէ փուլի ընթացքում պարզվում է, որ դիմում-հայտում ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ապա դպրոցը կարող է որակազրկվել և չմասնակցել հետագա փուլերին՝ դրա մասին տեղեկացվելով գրավոր կերպով:

Նշում: Դիմումները լրացվում են առցանց (դիմում-հայտին կից ներկայացվում է լրացման և հանձնման ուղեցույց): Առցանց լրացված և ուղարկված դիմումն անհրաժեշտ է տպել, ստորագրել և ներկայացնել «Այբ» կրթական հիմնադրամ Կորյունի 19ա հասցեով: Առանց էլեկտրոնային դիմումի՝ տպագիր դիմումն անվավեր է, առանց տպագիր դիմումի՝ էլեկտրոնային դիմումն անվավեր է:

Նշում: Բոլոր դիմորդ դպրոցները պարտադիր ծանուցվում են հաջորդ փուլ անցնելու/ չանցնելու որոշման մասին: Որոշումը ենթակա չէ բողոքարկման:

ՔԱՅԼ 2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՏՆՕՐԵՆԻ և ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Դիմումների փուլը հաջողությամբ հաղթահարելուց հետո ԱԲ-ի թիմը և/կամ մրցութային հանձնաժողովը հարցազրույց է անցկացնում դպրոցի տնօրենի հետ և հանդիպումներ ունենում անձնակազմի հետ:

Մենք փնտրում ենք տնօրեններ, ուլքեր՝

- Նախաձեռնող են և պատրաստ՝ կրթության ոլորտում բարելավումներ իրականացնելու,
- ամբողջովին ըմբռնում են ծրագրի առաքելությունը և վերջինիս կրողն են,
- բաց են և ցուցաբերում են համագործակցելու հետաքրքրություն և պատրաստակամություն:

Հարցազրույցին տնօրենները ներկայացնում են դպրոցին վերաբերող մի շարք փաստաթղթեր, որոնք համալրում են հայտում ներկայացված տեղեկությունը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Դպրոցի անձնակազմի կազմակերպական կառուցվածք

Հիմնական աշխատակազմի վերաբերյալ տվյալներ

Դպրոցի հատակագիծ, ֆիզիկական միջավայրին վերաբերող փաստաթղթեր

Աշակերտների և ուսուցիչների վարքականոսները (եթե առկա են)

Այլ առաջնային ընթացակարգեր, որոնք կօգնեն տեղեկություն ստանալ դպրոցի մշակույթի վերաբերյալ

Նշում: Փաստաթղթերի ցանկը կարող է համալրվել և փոփոխվել մինչև դիմումի փուլի ավարտը:

ԱԲ-ի թիմի այցը դպրոց նպատակ ունի՝

- հավաստիանալու դիմում-հայտում և կից փաստաթղթերում ներկայացված տեղեկություններին,
- ստանալու դպրոցի վերաբերյալ ամբողջական պատկեր՝ ծանոթանալով դպրոցի նպատակներին, կրթական մոտեցումներին, միջավայրին ու ավանդույթներին,
- համոզվելու, որ դպրոցի անձնակազմն ըմբռնում է ծրագրի նպատակներն ու պատրաստ է ծրագրի իրագործմանը,
- բացահայտելու այն ոլորտները, որոնք հետագա բարելավման կարիք ունեն:

Անհրաժեշտության դեպքում ԱԲ-ի թիմը կարող է հանդիպումներ ունենալ դպրոցի համայնքի այլ ներկայացուցիչների հետ ևս՝

- կոլեգիալ կառավարման մարմնից,
- վարչական անձնակազմից,
- ուսուցչական անձնակազմից,
- ծնողական համայնքից,
- աշակերտական համայնքից:

ԱԲ-ի թիմի այցը դպրոց կարող է տևել մեկից մի քանի օր՝ կախված դպրոցից և համայնքի հետ

հանդիպումների քանակից: Դպրոցը նախօրոք (1-2 շաբաթ առաջ) տեղեկանում է այցի ժամկետների վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ա. Տեղեկատվական բաժին – տեղեկություններ դպրոցի տնօրենության, ուսուցչական և վարչական անձնակազմերի, աշակերտների վերաբերյալ

Բ. Առաքելություն և նպատակներ – դպրոցի առաքելության և դրան տանող նպատակների ու գործողությունների նկարագրություն

Գ. Ուսումնառություն և դասավանդում – մասնագիտական և մանկավարժական զարգացման մոտեցումների, դպրոցի ուսումնական գործընթացների նկարագրություն, ուսուցիչների և աշակերտների ձեռքբերումների պատմություն

Դ. Ռեսուրսների կառավարում – Ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման մոտեցումներ

Ե. Համայնքային գործունեություն – դպրոց-շահառուներ փոխհարաբերության նկարագրություն, դպրոցի խորհուրդների դերը, դպրոցի դերը համայնքում

Զ. Մթնոլորտ – դպրոցի կազմակերպչական գործընթացների և միջավայրի նկարագրություն

Է. Ֆիզիկական միջավայր և անվտանգություն

Նշում: Աղյուսակում ներկայացված են դիմումի բաժինների հիմնական ուղղությունները: Դիմումի մեջ, սակայն, դպրոցները կտեսնեն միայն համապատասխան չափանիշների գնատմանն ուղղված հարցերը:

ԴԻՍՈՒՄԻ ՓՈՒԼԻՑ ՀԵՏՈ

Հարցազրույցին և այցին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում դպրոցը **ստանում է դիմումների փուլի արդյունքներն ամփոփող զեկույց:**

Հաջորդ փուլն անցնելու որոշումն ունի հետևյալ մակարդակները.

- **Ամբողջովին բավարարում է:** Եթե դպրոցը բավարարում է այս փուլի բոլոր պահանջները (տե՛ս ստորև), ապա դպրոցին ուղարկվում է թեկնածուության փուլ անցնելու մասին դրական որոշում, և ներկայացվում են թեկնածուության փուլի պահանջները:
- **Մասնակի է բավարարում:** Եթե դպրոցը բավարարում է այս փուլի հիմնական

պահանջները, ապա դպրոցին ուղարկվում է թեկնածուության փուլ անցնելու դրական որոշում: Սակայն այցին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում դպրոցը պետք է ներկայացնի մնացյալ պահանջները բավարարելուն ուղղված գործողությունների ծրագիր: Այդ պահանջները պետք է բավարարվեն առավելագույնը թեկնածուության փուլի առաջին երեք ամիսների ընթացքում: Հակառակ դեպքում դպրոցը կարող է դուրս մնալ ծրագրից:

- **Չի բավարարում:** Դպրոցին ուղարկվում է թեկնածուության փուլ անցնելու մերժման որոշում:

Նշում: Այս փուլում կայացված որոշումները ևս ենթակա չեն բողոքարկման:

ՓՈՒԼ 3. ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս փուլում դպրոցի հետ ստորագրվում է **համաձայնագիր**, որով հստակեցվում են դպրոցի և «Այբ» կրթական հիմնադրամի իրավունքներն ու պարտականությունները թեկնածության փուլի համար:

Թեկնածության փուլի ողջ ընթացքում ԱԲ-ի թիմը հանդես է գալիս **որպես խորհրդատու և գործընկեր**: Խորհրդատվությունը կրում է շարունակական բնույթ և տրվում է ինչպես ընթացակարգերի և ուղեցույցների, այնպես էլ ԱԲ-ի թիմի այցերի տեսքով:

Թեկնածության փուլի տևողությունը

Թեկնածության փուլը կարող է տևել 1-3 տարի: Յուրաքանչյուր դպրոց կարող է հաղթահարել այս փուլը տարբեր ժամանակահատվածներում: Այս փուլի ընթացքում դպրոցը պետք է ձեռնարկի անհրաժեշտ քայլեր՝ բավարարելու հավաստագրման համար անհրաժեշտ չափանիշները:

Հաշվետվողականություն

Յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված պարբերականությանը համապատասխան՝ դպրոցը ներկայացնում է հաշվետվություններ և զեկույցներ: Սահմանված պահանջները չբավարարելու դեպքում դպրոցը շարունակում է մնալ թեկնածության փուլում (այս փուլում մնալու առավելագույն ժամանակահատվածը 3 տարի է):

Թեկնածության փուլի ավարտ

Թեկնածության փուլի ցանկացած ժամանակահատվածում, երբ դպրոցը գտնում է, որ իրականացրել է ծրագրի բոլոր պահանջները և պատրաստ է հավաստագրման, մեր կայքից լրացնում և ներկայացնում է Հավաստագրման դիմումը, որի հիման վրա իրականացվում է հավելյալ այց դպրոց և կայացվում վերջնական որոշում:

Հավաստագրել: Եթե դպրոցը բավարարել է ԱԲ-ի ծրագրի բոլոր պահանջները, ապա նրան շնորհվում է ԱԲ-ի ծրագիրն իրականացնելու հավաստագիր, և 3-5 տարի դպրոցը գտնվում է ԱԲ-ի դպրոցի մեկնարկային փուլում:

Շարունակել թեկնածության փուլը: Այս որոշումը կայացվում է, եթե կան որոշակի փոփոխություններ, որոնք դպրոցը դեռ պետք է իրականացնի: Այս դեպքում ԱԲ-ի թիմը դպրոցին մանրամասն ներկայացնում է այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվեն բարելավումներ: Այնուհետև որոշվում է՝ արդյոք դպրոցը կարող է հավաստագրվել, թե պետք է շարունակի մնալ թեկնածության փուլում (այս փուլում մնալու առավելագույն ժամկետը 3 տարի է):

Մերժել: Այս որոշումը ստանում են այն դպրոցները, որոնք թեկնածության առաջին տարվա ընթացքում չեն համագործակցել և չեն իրականացրել մատնանշված փոփոխությունները: Հավաստագիր չեն ստանում նաև այն դպրոցները, որոնք չեն կարողացել 3 տարվա ընթացքում բավարարել հավաստագրման չափանիշները:

Նշում: Հավաստագրում չստացած դպրոցները որոշումը ստանալուց միայն որոշակի ժամանակ անց կարող են վերադիմել ԱԲ-ի ծրագրին անդամակցելու համար և մասնակցել բոլոր փուլերին՝ ընդհանուր ընտրության գործընթացից անկախ:

ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԻ ԱՎԱՐՏԻՆ ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բարեփոխված կառավարման ոլորտ

- Գործող կոլեգիալ մարմին (ԿՄ)
- Ռազմավարական ծրագիր՝ հաստատված ԿՄ-ի կողմից
- ԱԲ-ի տնօրենների զարգացման ծրագրի շրջանակում վերապատրաստված տնօրեն

Հավաստագրված ուսուցիչներ

Վերապատրաստված և հավաստագրված ուսուցիչներ հետևյալ առարկաներից՝

- կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա,
- համաշխարհային պատմություն,
- հայոց լեզու և գրականություն,
- հայոց պատմություն,
- անգլերեն:

Այս ընթացքում մյուս առարկաների ուսուցիչները պետք է արդեն ներգրավված լինեն ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրում և ունենան ԱԲ-ի ծրագրի մենտորներ*:

**Սա վերաբերում է միայն 2018 թ. սեպտեմբերի 1-ին բացվելիք ԱԲ-ի հոսքային դասարաններին: Ավելի ուշ բացվող դասարանների դեպքում դասավանդող բոլոր ուսուցիչները թեկնածության փուլի ավարտին պետք է լինեն վերապատրաստված և հավաստագրված:*

Բարելավված կրթական միջավայր

ԱԲ-ի առարկայական ծրագրերն իրականացնելու համար՝ համապատասխան՝

- առարկայական լաբորատորիաներ,
- համակարգիչներ,
- անհրաժեշտ սարքավորումներ և ծրագրեր:

ՓՈՒԼ 4. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

ԱԲ-ի հավաստագիրը ստանալուց հետո աստիճանաբար բարձրանում է ծրագրում ներգրավված ուսուցիչների աշխատավարձը:

Հավաստագրվելուն հաջորդող առաջին 3-5

տարին դպրոցը գտնվում է **մեկնարկային փուլում** և շարունակաբար ուղղորդում ստանում ԱԲ-ի թիմից:

Այնուհետև ԱԲ-ի թիմի ներգրավվածությունը դպրոցի կյանքում նվազում է, և իրականացվում են միայն տարեկան այցեր՝ հավաստագրի պահպանումն ապահովելու համար:

Հավաստագրումից անմիջապես հետո.

- դպրոցում ամբողջապես կներդրվեն ԱԲ-ի առարկայական ծրագրերը,
- կիրականացվի աշակերտների ընդունելություն՝ համաձայն աշակերտների ընդունելության կենտրոնացված կարգի:

Դպրոցի պարտավորությունները

- Պահպանել նախորդ փուլերում իրականացրած փոփոխությունները և շարունակաբար բարելավել:
- ԱԲ-ի թիմին ներկայացնել ԱԲ-ի ծրագրի իրագործման տարեկան հաշվետվություններ:

ԱԲ-ի հավաստագրի կասեցումը

«Այբ» կրթական հիմնադրամը կարող է կասեցնել ԱԲ-ի հավաստագիրը, եթե՝

- դպրոցը չի կատարում ԱԲ-ի դպրոցին ներկայացված պահանջները.
- դպրոցը չի համագործակցում ԱԲ-ի թիմի հետ, չի կատարում շարունակական զարգացմանն ուղղված քայլեր և պատշաճ կերպով չի ապահովում հաշվետվողականությունը.
- դպրոցի կառավարման և կազմակերպական կառուցվածքում կատարվում են մի շարք փոփոխություններ, որոնց արդյունքում դպրոցն ունենում է կառավարման և կազմակերպական կառուցվածք, որը լիովին տարբեր է նրանից, ինչ կար ԱԲ-ի հավաստագրման շնորհման պահին.
- դպրոցը խախտում է ԱԲ-ի մտավոր սեփականությանն առնչվող պահանջները:

Նշում: Եթե հավաստագրումից հետո դպրոցի տնօրենը և ղեկավար անձնակազմը փոխվում են, Մրցութային հանձնաժողովը կարող է փոխել դպրոցի կարգավիճակը և իրականացնել հավաստագրման արագացված գործընթաց:

ՈՎ Է ԿԱՏԱՐՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԲ-ի դպրոցների ընտրության ողջ գործընթացն իրականացվում է մրցութային հանձնաժողովի կողմից (ՄՀ), որն ունի 5 անդամ՝ ձայնի իրավունքով:

ՄՀ-ի անդամներն այն անձինք են, ովքեր ունեն բարձր հեղինակություն և ամենաբարձր կրթության բնագավառի հետ, վայելում են հասարակության վստահությունը, գիտակցում և արժևորում են ծրագրի առաքելությունը : ՄՀ-ի անդամներ կարող են լինել ինչպես ՀՀ ԿԳՆ, ՀՀ կառավարության, այնպես էլ «Այբ» համայնքի ներկայացուցիչներ: ՄՀ-ի անդամությունը կապված չէ անդամների զբաղեցրած պաշտոնների հետ:

Մրցութային հանձնաժողովի անդամներ



Լևոն Սկրոյան,
ՀՀ կրթության և գիտության
Նախարար



Դավիթ Փախչանյան,
ՀՀ պաշտպանության
փոխնախարար, «Այբ» կրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ



Մեսրոպ քին Արամյան,
ՀՀ Նախագահի՝ կրթության
գծով խորհրդական,
Կրթության գերազանցության
ազգային ծրագրի (ԿԳԱԾ)
տնօրեն




Վազգեն Յակոբյան,
Հայկական բարեգործական
ընդհանուր միություն (ՀԲԸՄ)
Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ
կենտրոնական վարչության
անդամ



Դավիթ Սահակյան,
ՀՀ կրթության և գիտության
Նախարարի տեղակալ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱԿՐԻՍԻ ԾՐԱԳՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՓՈՒԼԵՐԸ, ՔԱՅԼԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ



ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Հայաստան, 0009,
Երևան. Կորյունի փող., 19ա շենք
Հեռ.՝ +374 98 52 37 07
ab@ayb.am

www.araratbaccalaureate.am
www.ayb.am
www.aybschool.am

